



Համարը N 580-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2016.06.15/46(1226) Հոդ.544
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.06.2016

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 02.06.2016
Ստորագրման ամսաթիվը 09.06.2016
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

Գապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՂՎԱԾ ԿԱՄ ՄԱՀԱՑԱԾ ԿԱՄ ԱՆՀԱՅՑ ԿՈՐԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ՃԱՆԱԶՎԱԾ՝ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԶԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հունիսի 2016 թվականի N 580-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՂՎԱԾ ԿԱՄ ՄԱՀԱՑԱԾ ԿԱՄ ԱՆՀԱՅՑ ԿՈՐԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ՃԱՆԱԶՎԱԾ՝ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԶԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) կամավորական է համարվում 2016 թվականի ապրիլի 1-ից հետո Ադրբեյջանի Հանրապետության կողմից 1994 թվականի զինադադարի համաձայնագրի խախտման հետևանքով տեղի ունեցած մարտական գործողությունների մասնակցելու նպատակով կամավորագրված և մարտական գործողությունների շրջան մեկնած՝ զինվորական ծառայության մեջ չգտնվող անձը.

2) եթե կամավորականը գոհվել (մահացել) է, անհայտ կորել է կամ մահվան պատճառ հանդիսացած կամ հաշմանդամություն առաջացրած վնասվածքը կամ խեղումն ստացել է հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու, կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ, ապա գոհված (մահացած) կամ անհայտ կորած կամավորականի ընտանիքի անդամի, հաշմանդամ ճանաչված կամավորականի սոցիալական պաշտպանությունն իրականացվում է, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ գոհված (մահացած) զինծառայողի, ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած զինծառայողի ընտանիքի անդամի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

3) եթե կամավորականը մահացել է, անհայտ կորել է կամ մահվան պատճառ հանդիսացած կամ հաշմանդամություն առաջացրած վնասվածքը կամ խեղումն ստացել է սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված հանգամանքների հետ չկապված պայմաններում (սակայն մարտական գործողությունների շրջանում), ապա մահացած կամ անհայտ կորած կամավորականի ընտանիքի անդամի, հաշմանդամ ճանաչված կամավորականի սոցիալական պաշտպանությունն իրականացվում է զինվորական ծառայության ընթացքում մահացած զինծառայողի ընտանիքի անդամի և զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ ճանաչված զինծառայողի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

4) սույն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված՝ գոհված (մահացած), անհայտ կորած

կամավորականի ընտանիքի անդամի, հաշմանդամ ճանաչված կամավորականի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է պայմանագրային զինվորական ծառայության շարքային կազմի «ավագ սերժանտ» զինվորական կոչում ունեցող և 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող՝ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամի կամ զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ ճանաչված զինծառայողի համար սահմանված կարգով:

2. Չոհված (մահացած) կամ անհայտ կորած կամավորականի ընտանիքի անդամին, հաշմանդամ ճանաչված կամավորականին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության իրավունքներից և երաշխիքներից օգտվելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի N 778 որոշմամբ սահմանված տեղեկանքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 668-Ն որոշմամբ սահմանված պարզևավճար նշանակելու համար անհրաժեշտ տեղեկանքը տրամադրում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումը:

3. Կամավորականի՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված վնասվածքի կամ խեղման պատճառակա կապի վերաբերյալ փորձաքննությունը կազմակերպում և համապատասխան որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N 46-Ն որոշմամբ սահմանված կարգով: Վնասվածքի կամ խեղման պատճառակա կապի վերաբերյալ փորձաքննությունը կազմակերպվում է կամավորականի ստացած վնասվածքը կամ խեղումը հավաստող ստացիոնար բուժման կամ հետազոտման էպիկրիզի և վնասվածքը կամ խեղումն ստանալու հանգամանքների վերաբերյալ գորամիավորման (գորամասի) հրամանատարի տված տեղեկանքի առկայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման տված միջնորդագրի հիման վրա:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված դեպքում կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը կամավորականի ստացած վնասվածքի կամ խեղման պատճառակա կապը սահմանելիս ընդունում է հետևյալ որոշումները՝

1) վնասվածքը կամ խեղումն ստացել է համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված կամավորականի համար:

2) վնասվածքը կամ խեղումն ստացել է զինվորական ծառայության ընթացքում՝ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված կամավորականի համար:

5. Կամավորականի բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ զինծառայողի համար սահմանված կարգով:

6. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված՝ վնասվածք կամ խեղում ստացած և հետագայում մահացած կամավորականի մահվան պատճառակա կապը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի N 1456-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման տված միջնորդագրի հիման վրա: Ընդ որում, այս դեպքում, բժշկասոցիալական փորձաքննության մարմինը սույն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված հանգամանքների հետ մահվան պատճառակա կապ է սահմանում, եթե մահվան պատճառ են հանդիսացել սույն որոշման 1-ին կետում նշված վնասվածքը կամ խեղումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Հ. Աբրահամյան

2016 թ. հունիսի 9
Երևան